«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անուշ Ժամհարյան

Ուսումնական հաստատություն՝ Ն. Վ. Գոգոլի անվ. Հ. 35 դպ.

Երևան 2022

Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Ներածություն

Ընտանիքը մեկ միասնություն է, որը գտնվում է միևնույն տանիքի տակ և վարում է մեկ տնային տնտեսություն:

Ընտանիք կարող են կազմել բոլորը, բայց ոչ բոլորը կարող են պաշտպանել, քանի որ այն իր մեջ ներառում է շատ դժվարություններ ու բարդություններ: Չի կարելի ստեղծել ընտանիք, բայց հետևողական չլինել նրա նկատմամբ:

Ինչու՞ ես ընտրեցի այս թեման:

Մեր շրջապատում շատերն են ստեղծում ընտանիք, բայց ոչ բոլորն են այն կարողանում պահպանել: Մի բան է ընտանիք ստեղծելը, մի այլ բան է այն ամուր պահելը և կոնֆլիկտներից զերծ մնալ: Այս թեման շատ արդիական է և իր մեջ ամփոփում է շատ վիճելի խնդիրներ:

Իմ նպատակն այն է, որ մարդիկ ընտանիք կազմելուց առաջ լինեն խոհեմ, հաշվի առնեն այն բոլոր բարդությունները, որոնք կարող են ծագել ցանկացած ընտանիքում՝ կախված սոցիալական վիճակից, բազմանդամ լինելուց, կամ իր մեջ մի քանի սերունդ պարունակելուց, որոնք էլ կարող են կոնֆլիկտների պատճառ դառնալ:

Ինչ է ընտանիքը:

Ընտանիքը մարդկանց մի խումբ է, միասին են և միասնություն են կազմում մեծերն ու երիտասարդները ծերերն ու երեխաները: Այնտեղ տիրում է սերն ու ուրախությունը, շատ պայծառ պահեր և կյանքը լուսավորված է երջանկությամբ: Ամուր ընտանիք ունենալու համար անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես՞ կարող են մարդիկ դրան հասնել: Որոշ հետազոտությունների արդյունքում եկել են այն եզրակացության, որ ընտանիքում պետք է լինի սեր միմյանց նկատմամբ, փոխադարձ ներողամտություն և համբերություն: Սա է ցանկացած լավ ընտանիքի գոյատևման հիմքը:

Ընտանիքը մարդու համար նախևառաջ տուն է, որը լի է հարազատներով ու սիրելիներով, որտեղ կարող ես մխիթարություն և աջակցություն գտնել: Երբ մարդը իր ընտանիքում զգում է սեր, ջերմություն և հոգատարություն իր հանդեպ, նա նույն պես ցանկանում է իր մեջ եղած ջերմությունն ու հոգատարությունը փոխանցել ընտանիքի մյուս անդամներին: Այս դեպքում մարդը հասկանում է, որ իր ընտանիքը ձևավորվել է ամուր հիմքի վրա, և այն կառուցված է ողջ կյանքի համար:

Բոլորն էլ ծնվել են ընտանիքում, որից հետո մեծանալով՝ որ ընտանիքը ոչ միայն միավորում է տարբեր բնավորություն ունեցող անձանց, այլև տարբեր ձևեր և միջոցներ է պահանջում նրանց փոխադարձ հարաբերությունների միջև: Այդ պատճառով ընտանիքների միջև ձևավորվում են հետևյալ սանդղակները՝ կապված զույգերի ընտանեկան տարիների հետ:

Կան ընտանիքների հետևյալ տեսակները

1. Նորաստեղծ ընտանիքներ, որը նոր է ձևավորվում և նրանց մոտ «մեղրամիս» է: Դա կախված է նրանից, թե որքան կշաունակվի նրանց մոտ այդ ժամանակահատվածը: Նրանք կարծես կտրված լինեն իրականությունից, ամեն ինչ շատ պարզ ու հասկանալի է և կյանքում ոչ մի դժվարություն չեն տեսնում իրենց առջև: Նրանց կարծիքով դժվարության դեպքում որևէ մեկը կօգնի հաղթահարել այն:
2. Ընտանիքի հաջորդ փուլը երիտասարդ ընտանիքն է: Այս իրավիճակը ստեղծվում է այն ժամանակ, երբ զույգերի միջև ավարտվում է «մեղրամիսը»: Որոշ ընտանիքներում լինում է ամուսնությունից կես տարի անց, իսկ երբեմն նաև ավելի շատ և երիտասարդ ընտանիքները բախվում են իրականության հետ: Հենց այստեղ էլ երիտասարդները հասկանում են, որ միայն սերը քիչ է և այլ բաներ են անհրաժեշտ: Միմյանցից պահանջում են ավելի շատ ուշադրություն, բարություն, հարգանք և փոխըմբրնում և փոխզիջում: Այս ամենի պակասի հետևանքով երիտասարդ զույգերը սկսում են վիրավորել միմյանց, կարծես ուշադրության և անտարբերության պակաս են զգում թե՛ իրենց, և թե իրենց ծնողների և ազգականների նկատմամբ: Որոշ ընտանիքներում զույգերը կարող են միմյանց հասցեի սուր վիրավորանքներ հնչեցնել, որը և սկսում է ազդել ընտանիքի հոգեբանության վրա: Սկսում են մտածել ամուսնալուծության կամ դավաճանության մասին: Նրանցից յուրաքանչյուրը ի ցույց է դնում իր բնավորության

բացասական գծերը և սկսում են ցուցաբերել իրենց փոքրոգությունը մեկը մյուսի հանդեպ:

3. <u>Առաջնեկին սպասող ընտանիք</u>: Երբ երիտասարդ ընտանիքը հայտնվում է այս իրավիճակում, նրանց մեջ նկատելիորեն փոխվում են հարաբերությունները: Առավել փոխվում է ընտանիքի հայրը, որը էլ ավելի մեծ ուշադրություն և հոգատարություն է ցուցաբերում իր կողակցի հանդեպ՝ չնկատելով ոչ մի սահման կամ խոչընդոտ: Այսպիսի վերաբերմունքը իհարկե շատ կարևոր է ապագա մոր և երեխայի հանդեպ: Սակայն մեր իրականությա մեջ կարող են հանդիպել նաև ոչ նմանատիպ ընտանիքներ, բայց փորձենք ընդունել, որ այդպիսի ընտանիքները շատ քիչ կարող են լինել:

4. Միջին տարիքի ընտանիքները երեքից մինչև տասը տարվա պատմություն ունեցող ընտանիքներն են: Ճիշտ ձևավորվող ընտանիքի համար այս տարիները շատ ավելի վտանգավոր են և պատասխանատվություն են պահանջվում: Հենց այս տարիներին է, որ ընտանիքներում տիրում է միապաղաղություն, առաջանում է ձանձրույթ մեկը մյուսի հանդեպ և հաճախակի են դառնում վեճերը, ծագում են կոնֆլիկտներ և մեծամասնությունը մտածում է ամուսնալուծության մասին:
5. Հաջորտ տարիքը տասից մինչև քսան տարին է, երբ ընտանիքը որոշ չափով հաղթահարել է ֆիզիկական և բարոյահոգեբանական դժվարությունները, որը և բերում է փոխըմբռնման և փոխզիջման: Այս ժամանակահատվածում գրեթե չեն լինում վեճեր և կոնֆլիկտներ:
6. Հաջորդ էտապը հասուն տարին է, երբ ընտանիքի զավակները ամուսնանում

են՝ ստեղծելով նոր ընտանիքներ, ծնվում են թոռներ: Ընտանիքներում նոր իրավիճակներ են առաջանում և նրանց ուշադրության կենտրոնում հայտնվում են թոռները:

Ամուր ընտանիքի ստեղծնան և նրա պահպանման վրա մեծ ազդեցություն կարող են ունենում երեխաների քանակը, կամ նրանց բացակայությունը, ինչը և մեծ ներգործություն է ունենում ընտանիքի հոգեբանության վրա:

Եթե ընտանիքում շուրջ տասը տարի երեխա չի ծնվում, ապա այդպիսի ընտանիքները կազմալուծվում են ավելի շատ ամուսնու

պահանջով: Երեխա չլինելու պատճառը կարող է լինել նրանց անհամատեղելի լինելու պատճառը կամ չցանկանալը: Հետզհետե նրանց միջև բացակայում է փոխըմբռնումը, շատանում են կոնֆլիկտները, որը և բերում է ամուսնալուծության:

Մեկ զավակ ունեցող ընտանիքները մեծ թիվ են կազմում և նրանք չեն կարող երկար գոյատևել, թեպետ նրանք մեկ երեխայի կարիգն են հոգուն: Իրենց կարծիքով չեն կարող զույգերը միասին ապրել, այդ պատճառով մեկ երեխա են ունենում և չեն համարձակվում երկրորդն ունենալ: Եթե այսպիսի ընտանիքը պահպանվում է, ապա այդ ընտանիքի զավակը մանկավարժորեն պատրաստ չէ հաղթահարելու իր առջև ծառացած դժվարությունները: Մեկ երեխա ունեցող ընտանիքի զավակը գաղափարապես կարող է շատ զարգացած լինել, սակայն բարոյահոգեբանորեն նա այնքան էլ պատրաստ չէ ամեն ինչի: Լինում է անպատասխանատու, աշխատասեր չի լինում և նույնիսկ կարող է լինել եսասեր, չի կարողանում լավ հարաբերություններ ստեղծել շրջապատի հետ: բնականաբար այդպիսի ընտանիքների գոյատևումը որոշ չափով վտանգվում է, ընտանիքի անդամների հոգեբանական իրավիճակն այնքան էլ կայուն չի լինում և հնարավոր է, որ ավելի հաճախ ծագեն կոնֆլիկտներ:

<u>Երկու երեխա ունեցող</u> ընտանիքների հոգեբանական իրավիճակն ավելի կայունանում է այն ժամանակ, երբ ծնվում է երկրորդ երեխան: Ըստ սոցոլոգների՝ այդպիսի ընտանիքները ավելի կայուն են լինում: Այստեղ ամուսնալուծությունների թիվը ավելի է նվազում:

Երեք և ավելի զավակ ունեցող ընտանիքները շատ ավելի երջանիկ են լինում: Նմանատիպ ընտանիքներում ամուսնալուծության թիվը կտրուկ նվազում է: Եթե նման խնդիր է առաջանում, ապա միմյանց սոցիալապես անապահով իրավիճակ ստեղծվելու դեպքում կամ գաղափարապես իրար չհասկանալու դեպքում: Ընտանիքը շատ երեխաներ ունենում է այն դեպքում, երբ ամուսիների միջև կա փոխըմբռնում, միմյանց նկատմամբ վստահություն: Բազմազավակ ընտանիքներում մեծ է մոր դերը, որը ուժ, սեր, հավատ և համբերություն է ներշնչում միմյանց նկատմամբ: Այսպիսի ընտանիքներում տիրում է խաղաղություն, համերաշխություն և սեր ու նույնիսկ ստեղծվող կոնֆլիկտները դառնում են լուծելի:

Մեր շրջապատում քիչ չեն նաև այնպիսի ընտանիքները, որտեղ երեխան կամ երեխաներն են միայն ծնողներից մեկի հետ հատկապես մոր հետ: Այդ իրավիճակը կարող է ստեղծվել, երբ ծնողներից մեկը մահանում է, կամ ամուսնալուծվում են կամ ոչ օրինական ամուսնությունից ծնված երեխա կամ երեխաներ են լինում: Կարող է նաև կինը երեխա որդեգրի: Այսպիսի ընտանիքների երեխաները իրենց ժամանակի մեծ մասը անցկացնում ոչ թե տանը, այլ դրսում, որովհետև մայրը աշխատում է, և նրանք կարող են կատարել օրենքի շատ խախտումներ: Այս ընտանիքի երեխաները հոգեբանորեն պատրաստ են լինում հաղթահարելու ու բոլոր դժվարությունները, լինում են հասկացող, ինքնուրույն, արձագանքող, բռնկուն, հուզական, աշխատասեր և ավելի վաղ տարիքից են սկսում

հաղթահարել իրենց առաջ դրված բարդություններն ու դժվարությունները: Կան նաև միայնակ կամ հասարակ ընտանիքներ: Այն ստեղծում են ամուսիները միայնակ կամ երեխաների հետ, որոնք կարող են ապրել իրենց ծնողների կամ այլ հարազատների հետ կամ առանց նրանց: Երեխաների ծնողները լինում են շատ ինքնուրույն և իրենց կյանքը շատ ճիշտ են կազմակերպում: Այս ընտանիքներում ստեղծվում են լավագույն պայմաներն զույգերի ինքնարտահայտման: բոլոր դեպքերում բացառված չեն նաև այսպիսի ընտանիքներում ծագեն կոնֆլիկտներ, որը և կարող է բերել ամուսնալուծության: Բազմանդամ կամ ընդարձակ ընտանիքները մեծ թիվ են կազմում, որտեղ կան երեք սերնդի ներկայացուցիչներ: Ամուսիները բնակվում են զույգերից մեկի ծնողների հետ և այսպիսի ընտանիքներում կան երկու ամուսնական զույգեր: Այսպիսի ընտանիքներում կենցաղային իրավիճակը ավելի լավ է դասավորվում: Երիտասարդ զույգերը ավելի շատ են ազատ ժամանակ ունենում և ավելի քիչ են վիճաբանություններ լինում չնչին բանի համար: Այս ընտանիքներում ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը հարգում է մյուսի կարծիքը: Ստեղծված կոնֆլիկտները անմիջապես լուծվում են ընտանիքի ավագ սերնդի անդամներից մեկի կողմից: Նույնիսկ այսպիսի ընտանիքներում էլ են լինում ամուսնալուծության դեպքեր, որոնց թիվը այդքան էլ քիչ չէ: Զույգերը պատճառաբանում են, որ ծնողները խառնվում են: Այսինքն նրանո են կոնֆլիկտնեի պատճառ դառնում:

Մեծ ընտանիքները բաղկացած են լինում երեք և ավելի ամուսնական զույգերից: Դա նշանակում է, որ ընտանիքներում, բացի ծնողներից, ապրում են նաև նրանց զավակները իրենց ընտանիքներով:

Եվրոպական երկրներում նմանատիպ ընտանիքներ գրեթե չեն հանդիպում նույնիսկ հեռավոր գյուղերում:

Մեզ մոտ այդպիսի մեծ ընտանիքներում՝ որպես օրենք, յուրաքանչյուրն ունի իր պարտականությունը ընտանիքի անդամների նկատմամբ և հերթականությամբ մեծ ընտանիքի մեջ գտնվող յուրաքանչյուր փոքր ընտանիք իր վրա է վերցնում մյուս անդամների հոգսերը: Բայց արդեն փաստ է, որ նմանատիպ ընտանիքների թիվը ժատ քիչ է դա դա արդեն փաստ է:

Այսպիսով՝ գալիս ենք այն եզրակացության, որ ընտանիքները կարող են լինել կոնֆլիկտային և ոչ կոնֆլիկտային: Իսկ այդ կոնֆլիկտները կարող են առաջանալ տարբեր պատճառներից: Պատճառ կարող է հանդիսանալ ընտանիքի անդամների թիվը, ընտանիքում եղած երեխաների քանակը, կամ էլ ընտանիքում մեկից ավելի սերնդի ներկայացուցիչներ լինելու հանգամանքը: Կարող է ընտանիքի հոգեբանության վրա ներգործել նաև ընտանեկան ֆինանսը բյուջեն, բազմանդամ լինելը կամ էլ միմյանց նկատմամբ հանդուրժողական չլինելը, որն էլ հնարավոր է, որ զույգերին բերի ամուսնալուծության:

Այս ամենից զատ գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտղ տիրում է հավասարություն զույգերի միջև, այսինքն՝ այդպիսի ընտանիքներում ամուսնական զույգերից ոչ մեկը չի իշխում մյուսի վրա՝ կախված իր զբաղեցրած դիրքից կամ պաշտոնից: Այսպիսի ընտանիքներում ունեցած կարողությունը համարվում է ընդհանուր, և ոչ ոք չի ձգտում ղեկավարել մյուսին:

Կա նաև ընտանիքի մեկ այլ տեսակ, որ կոչվում է հեղինակավոր: Այս ընտանիքում գերիշխում է մոր դերը, և դրանց կոչում են մայրիշխանություն: Փոքր թիվ չեն կազմում այդ ընտանիքները: Այս տիպի ընտանիքներում ավելի հաճախակի են լինում վեճեր ղեկավարությունը իր ձեռքը վերցնելու համար: Բնականաբար դրանք համարվում են կոնֆլիկտային ընտանիքներ: Բայց կարող են նաև հեղինակավոր ընտանիքներում տիրել համերաշխություն, անգամ եթե մայրն է ղեկավարում ընտանիքը:

Շատ կարևոր է նաև այն հանգամանքը, երբ ընտանիքը ֆինանսապես ապահովված է լինում: Նախ այդ ընտանիքներում շատ մեծ ուշադրության են արժանանում հատկապես երեխաները, հետո մյուս անդամները: Շատ ուշադրություն են դարձնում իրենց երեխաների առողջության, կրթության, դաստիարակության և զարգացման վրա և լավ հարաբերությունների մեջ են լինում իրեն ազգականների հետ: Այս ամենի հետ շատ կարևոր է համարվում նաև ջերմ հարաբերությունները միմյանց նկատմամբ: Ընտանիքում տիրում է ջերմություն և համերաշխություն, և բնակչության մեծ մասը փորձում է պահպանել այդ հարաբերությունները, միմյանց նկատմամբ, որպեսզի չծագեն կոնֆլիկտներ և տիրի սեր, համերաշխություն, երջանկություն ու փոխադարձ հարգանք:

Սակայն այս ամենին հակառակ գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որոնք նման են սպորտային խմբի: Այս ընտանիքներում մեկը մյուսի հանդեպ այդքան էլ ուշադիր չեն, չի տիրում կարգուկանոն, սնունդն էլ այնքան լավ վիճակում չէ:

Բայց այստեղ բոլորը ուրախ են, հետաքրքիր է, չկա միօրինակություն: Այդ ընտանիքի անդամները հաճախակի ճամփորդում են թե՛ ոտքով թե՛ հեծանիվով և թե՛ տուրիստական խմբերով: Նմանատիպ ընտանիքի անդամները ամեն ինչ կարողանում են հասցնել և նորից պատրաստվել նոր ճամփորդության հաջորդ արձակուրդին: Բնականաբար այս ընտանիքները իրենց ժամանակի մեծ մասը անցկացնում են դրսում, հասարակության մեջ և նրանց այդքան էլ չեն

հետաքրքրում այլ խնդիրներ, քանի որ ճանապարհորդելիս նրանք ավելի երջանիկ են և բավարարված:

Գոյություն ունեն միասեռ և տարասեռ ընտանիքներ:

Միասեռ ընտանիքներում ընտանիքի անդամները ունեն նույն մասնագիտությունը, այսինքն՝ կամ բանվորներ են, կա՛մ ծառայողներ, կա՛մ արվեստագետներ: Այս ընտանիքները համեմատաբար հանգիստ են, բարյացակամ են միմյանց նկատմամբ:

Տարասեռ ընտանիքներում զույգերը ունեն տարբեր կրթություններ, տիրապետում են տարբեր մասնագիտություններ և զույգերից յուրաքանչյուրը մյուսի ծնողների հետ ճիշտ հարաբերություններ չի ստեղծում: Զույգերից որի ծնողներն ակտիվ և գործունյա է, ապա նրանք են գերիշխում ընտանիքում, որից էլ ծնվում են տարաձայնությունները:

Ըստ փոխադարձ հարաբերությունների որակի՝ ընտանիքները լինում են հաջողակ և երջանիկ, կայուն, և դիմացկուն, պրոբլեմատիկ, ուր տիրում է սառը մթնոլորտ, կոնֆլիկտային ընտանիքներ, որ զույգերի քաղաքակիրթ մակարդակը գտնվում է շատ ցածր մակարդակի վրա և ոչ կազմակերպված ընտանիքներ, ուր տիրում է անախորժություն և ընտանիքի յուրաքանչյուր անդամ ապրում է ինքն իր համար և մարդկային փոխհարաբերություններ չկա նրանց միջև:

Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ առաջին տեղում է գտնվում նրանց գոյության հարցը: Նրանց ավելի շատ

հետաքրքրում է սննդի և հագուստի խնդիրների լուծումը և ոչ թե թանկարժեք իրեր ունենալը:

Ընտանիքի մեկ այլ տեսակ է, զարգացած ընտանիքը: Նրանք այնքան էլ չեն տարբերվում նախորդ տեսակից: Քանի որ նրանց համար ոչ թե որևէ համեղ սնունդն է կարևորմ այլ որևէ հետաքրքիր գիրք:

Կան նաև <u>ուսանողական ընտանիքներ</u>, որտեղ ամուսնական զույգերից մեկը ուսանող է և նրանք չունեն բնակարան, միշտ լինում են ֆինանսապես անապահով և կախվածություն է առաջանում ծնողներից: Այս ընտանիքներում հավատը չեն կորցնում լավ ապագայի հանդեպ:

Վերջապես կան նաև այնպիսի ընտանիքներ ուր կա ամուսնություն, բայց չկա ընտանիք: Դրանք հիմնականում ծովայինների,

դերասանների, հայտնի սպորտսմենների, տիեզերագնացների, երկրաբանների ընտանիքներն են: Այս ընտանիքներում զույգերը ավելի քիչ են ապրում իրար հետ, քանի որ աշխատանքի բերումով ավելի շատ են իրարից հեռու գտնվում: Ուրեմն նաև ամուսնական անհավատարմություն կտիրի և հնարավոր է, որ ընտանիքը չպահպանվի: Բայց կարող է լինել նաև հակառակը: Իրարից հեռու գտնվելով՝ նրանք կարող են նաև ավելի ամուր պահել իրենց ընտանիքը, քանի որ յուրաքանչյուր հանդիպումից հետո կարող է առաջանալ նոր սեր և նոր զգացմունքներ, ինչն էլ էլ ավելի ամուր և երկար կպահպանի ընտանիքը:

Այսպիսով՝ ես կարծում եմ, որ իմ առջև դրված այս բարդ խնդրի լուծումը որոշ չափով ես կարողացա պարզաբանել:

Հետազոտական աշխատանքը գրելու ընթացքում ես ներկայացրեցի ամենաբազմազան ընտանիքներ, որտեղ կային և կոնֆլիկտային ընտանիքներ:

Ամուր և ոչ կոնֆլիկտային ընտանիք ունենալու համար անհրաժեշտ է, որ զույգերի միջև լինի փոխադարձ հարգանք, սեր, միաբանություն, միմյանց շուտ ներելու կարողություն ունենան, ֆինասապես ապահովված լինեն: Ունենան երեք և ավելի երեխաներ, որն ավելի է ամրապնդում ընտանիքը:

Ես ցանկանում եմ, որ մեր շրջապատում ավելի քիչ լինեն ընտանեկան կոնֆլիկտներ, առավել ևս ամուսնալուծություններ, որոնք կարող են լուրջ և ծանր հետևանքներ թողնել զույգերի և հատկապես երեխաների և նրանց ապագայի վրա: բայց չեն կարող

խուսափել նաև կոնֆլիկտային ընտանիքներ ունենալուց, քանի որ մարդիկ շատ տարբեր են առավել ևս՝ նրանց մտածելակերպը:

Գրականություն՝ Վ. Ի. Զացեպին

«Ամուսնություն և

ընտանիք»

2002թ: